*Հավելված N 3*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*

*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Կապանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար բակերի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 պայմանագրում 2020 թվականի փետրվարի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 Լրացուցիչ աշխատանքների ձեռքբերման անհրաժեշտություն

Փոփոխության նկարագրություն Լրացուցիչ աշխատանքների ավելացում պայմանագրի 10 տոկոսի շրջանակում, Համաձայնագրի կնքում

Փոփոխության հիմնավորում Պայմանագրի 7,5 կետ, Գնումների մասին ՀՀ օրենսդրություն

Պատվիրատու՝ Կապանի համայնքապետարան

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2**
**ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2019թ. դեկտեմբերի 20-ին կնքված N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/2» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Կապան «27» փետրվար 2020թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Հովսեփյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ելնելով անհրաժեշտությունից և հաշվի առնելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը, համաձայն Գնումների մասին ՀՀ օրենսդրության և պայմանագրի 7.5 կետի, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.Սույն համաձայնագրի առարկա է հանդիսանում՝

1.1Լրացուցիչ ծավալի աշխատանքների կատարում՝ Արծվանիկ վարչական բնակավայրի երկրորդ փողոցի/մոտ 500մ/ ասֆալտապատման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում,

1.2 Պայմանագրի գնի ավելացում 990000/ինը հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամով,

1.3Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում՝ մինչև 2020թ. մարտի 13-ը:

2.Պայմանագրի 4.1 կետի <<Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 11640000 (տասնմեկ միլիոն վեց հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 1940000/մեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ>> նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ <<Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 12630000(տասներկու միլիոն վեց հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 2105000/երկու միլիոն մեկ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ>> նախադասությամբ:

3.Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցը և Վճարման ժամանակացույցը փոփոխվում են սույն համաձայնագրով կատարվող փոփոխություններին համապատասխան:

4.Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

5.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները, ստորագրությունները.

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| **Կապանի համայնքապետարան** | **<<Հալդի Քոնսալթ>> ՍՊԸ** |
| **Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա** | **ՀՀ. Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս** |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ** |
| **ՀՀ 900312512040** | **ՀՀ 220001150832000** |
| **ՀՎՀՀ 09426088** | **ՀՎՀՀ 08417251** |
| ---------------------------------------- | ---------------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |